

ՍՊԱՆԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

(Կահիրե)

Սպանիա և իր ժողովուրդը մեկն է այն ազգերեն և երկիրներեն, որոնք հայ աշխարհին և հայ ժողովրդին հետ հարաբերություններ ունեցած են բավական հին ժամանակներէ ի վեր:

Դարեր առաջ Պալքանյան թերակղզիէն Փոքր Ասիա մտնող հնդեվրոպական ժողովուրդներու տեղաշարժի հետեանոր ինչպէս Փոյուղիայէն Հայաստան մտած են հայերը, նույնպէս կկարծվի, թէ Սպանիա բնակող պասերը, իբրև այդ հնդեվրոպական ժողովուրդներու մեկ հատվածը, դառնած են Սպանիա:

Այս շատ հին ժամանակներու պատկանող և նախապատմական դարերու մշտնջին մեջ կորսված երևույթներով զբաղիլ մեզի շատ հեռուները կրնա տանիլ, ուստի պիտի խոսիմ միայն պատմական շրջաններու մեջ երկու ազգերու հարաբերություններուն վրա, որոնց փաստերը հաստատուն են, նաև ակներև և վեճի առարկա չեն կրնար ըլլալ:

Խաչակրութեան առթիվ է, որ երկու ազգերը իրարու հետ հարաբերություններ ունեցան, ինչպէս բոլոր խաչակիրներուն հետ, որոնք, պատմութունը ինչպէս կվկայէ, շատ սերտ հարաբերություններ ունեցած են Կիլիկիո Ռուբինյան հայ իշխանապետութեան հետ:

Այդ թվականէն հետո սպանիացիք միշտ երթեկէ ունեցած են Արևելքի հետ: Միջերկրական շատ մը քաղաքներու նավերու կարգին Կիլիկիո հայ թագավորութեան նավահանգիստները կողային նաև սպանիական վաճառականական նավեր, մասնավորապէս Պարչելունայի, Մայորքայի և Սևիլիայի նավահանգիստներէն, ինչպէս կ'իշխի Մովային օրինաց (Comsolato del Mare) մեջ: Մասնավորապէս նշանակելի է, որ քաջալոնացիք 1293 թվականին ստացած էին առևտրական առանձնաշնորհումներ կամ արդի բացատրութեամբ կնքած էին առևտրական դաշինք Կիլիկիո հայկական թագավորութեան հետ, որուն Այաս նավահանգիստը այդ թվականին Արևելքի ամենէն բանով ու ճոխ նավահանգիստներէն մին էր, ուր վենետիկ և ճենովա ունեին իրենց պայլը և գունդը, որոնք արդի հյուպատոսներու դերը կկատարէին:

Մինչև այդ թվականը, ուր Արաղոնի թագավորը վենետիկցիներու և ճենովացիներու հավասար իրավունքներ պահանջած և ստացած էր, սպանիացիք արդէն երթեկէ ունեին Կիլիկիա, սակայն կերևա, թէ առանձին պայլ չունեին, ինչպէս ունեցան 1293-էն հետո, երբ դաշինք կնքվեցավ Արաղոնի Հակոբ Բ թագավորին (1251—1327) և հայոց Հեթում Բ թագավորին (1289—1297) միջև: Ասոր փաստ կհամարե Ղ. Ալիշան¹ 1274 թվականով այն դիվանագիտական

¹ Ալիշան, Սխուան, էջ 363:

վավերագիրը, որ ճենովացվոց գունցին ապարանքը ստորագրած է սպանիացի Պետրոս Հովհան քհն., որ Այաս հաստատված մեկը կթվի և ոչ թե պատահական անցորդ մը:

1293-ի դաշինքին կնքվելեն հետո, ինչպես կթվի, Արագոնի Հակոբ Բ. թագավորը, առևտրական հարաբերությունները պահպանելու և ընդարձակելու նախահոգությամբ, շարունակած է բարվոք հարաբերությունը պահել Հեթում Բ-ի հաջորդներուն հետ. այսպես, անիկա կունենա շատ բարեկամական հարաբերություններ մեր Կիլիկիո Օշին թագավորին (1308—1320) հետ, որուն նախ 1319-ին մասնավոր դեսպանի մը ձեռքով և անոր փափաքին համաձայն կղրկե վեց արու և չորս մատակ ձիեր և 1320-ին կրկին երկու արու ձիեր, տրոնց արտածումը կերևա թե բացառաբար կարտոնե Հակոբ թագավոր, ինչպես կտեսնվի Պարչելոնայի քաղաքին մատենագրարանը պահված երկու վավերագիրներն¹:

Այս բարեկամական հարաբերությունները, մանավանդ այնպիսի շրջանի մը, ուր հայ թագավորները միամտությամբ իրենց իշխանության պահպանությունը շոտի պապեն և քրիստոնյա արևմուտքեն կակնկալին, պահպանված ըլլալ կթվին՝ այս երկիրը ևս գտնվելով անոնց կարգին, որոնց վրա հույս դրած էին մեր Կիլիկիո թագավորները:

Սակայն տակավին այն ատեն Սպանիա չէր ներկայացներ մեծ ուժ մը, վասնզի երկիրը, որ այսօր մենք սպանիա անունով կճանչնանք, բաժնված էր մի քանի թագավորություններու, ինչպես Արագոնի, Կաստիլիո, Նավարրայի և այլն, որոնք հաճախ իրարու հետ կռվելով իրար կտկարացնեին:

Ասով հանդերձ Սպանիո մեջ, ուր կրոնքը այնքան կարևոր տեղ բռնած էր, և միշտ Արևելքի այլակրոն ազգերուն դեմ կռվելու զաղափարը մտադրադրություն մը եղած էր, հայ թագավորության օգնության ճիշերը հասած են համարներն Հոռոմի խողովակով, և թերևս արձագանք ալ գտած:

Այսպես, 1375 ապրիլ 15-ին, երբ Լեոն Ծ վերջին Լուսինյան թագավորը հայոց գերի ինկավ եգիպտացվոց ձեռքը և փոխադրվեցավ Փահիրե և անկե դիմումներ կատարեց քրիստոնյա երկիրներու, որպեսզի իր արձակման համար միջամտեն, ի մեջ այլոց դիմեց նաև Սպանիո թագավորներուն, որոնցմե Արագոնի Պետրոս Գ թագավորը (1336—1387) մի քանի անգամներ դիմած էր նեպոստի սուլթանին, առանց հաջողության: Լեոն, քաջալերված այս ջանքերեն, իր խոստովանահայրը՝ Հովհաննես Գարդիլ քահանան իր լիազոր զրկեց նվրոպա: Հովհաննես Գարդիլը իր ընկերակից Անտոն քահանայի հետ ճամբա ելավ Փահիրեն 11 սեպտեմբեր 1379-ին և վեց ամիս թափառելե ետքը, հասավ Պարչելոնա (1-ր մարտի 1380), ուր ներկայացավ Արագոնի թագավորին: Պետրոս Գ ղեկավարություններ հանեց, միայն «Հաղթություն» անունը կրող ցոկանավ

¹ Տե՛ս «Բանասեր», 1905, էջ 67 և 73—74: Նույնպես կմնան պահված ուրիշ գիրքեր նույն թագավորեն, որոնցմե կհասկցվի, թե երկու թագակիրներուն միջև գոյություն ունեւր մտերմություն և բարեկամություն (տե՛ս նույն տեղում, էջ 71) և դեսպանական հարաբերություն:

Հակոբ Բ-ի և Օշինի բարեկամությունը անով ավելի հասկանալի կդառնա, երբ նկատի առնենք, թե Օշին մեր հայոց այն թագավորներեն մին եղած է, որ արևմուտքեն օգնության մը ակնկալությամբ լատինամիտ հակուսներ ցույց տված է և իր առաջին կնոջ՝ Զաակիի մահեն հետո ամուսնացած է Տարինտա իշխանին՝ Փիլիպոսի աղջկան հովհաննեսի հետ:

մը Գարգելի տրամադրության տակ դրավ այլևայլ ծախքերն ու նվերներն խուսափելու համար: Երբ Գարգել կոահեց Պետրոսի մերժելուն պատճառները, առաջարկեց Արագոնի պետության մեջ գտնվող բոլոր եկեղեցիներու եկամուտը հատկացնել Լեոնի փրկության գործին, պայպին առջև պատասխանատվությունն իր վրա առնելով: Այն ատեն թագավորը տեղի տվավ և ոչ միայն հանձնարարական թուղթերով Գարգելը զրկեց իր իշխանության տակ գտնվող առաջնորդներուն և մեծամեծներուն, որպեսզի անոնք՝ ալ իրենց աջակցությունը տան Լեոնի ազատության համար, այլև Փրանկիսկոս Սակլոզա անունով վաճառականի մը և պարչելոնացի նավատերի մը հետ, որ առևտրական գործերու կարգադրության համար նգիպտոս կերթար, Պետրոս Գ-ի կողմն զիր մը հղեց նգիպտոսի սուլթանին², և ամիս մը հետո ալ նվերներով և նոր նամակներով նգիպտոս զրկեց իր ղեսպանը՝ Բոնանատ Սապերան, որուն առաքելությունը գրական արդյունք մը չունեցավ:

Գարգել ասոր վրա դիմեց Կասդիլիո շովհաննես Ա թագավորին (1379—1390), որուն ներկայացավ 1380 նոյեմբեր 29-ին և անկե խոստում ստացավ, թե իր «եղբայրակցին» փրկության համար ձեռքն եկածը պիտի ընէր, բայց ղանազան արգելքներ կային: Մասնավորապես Փորթուկալի հետ պատերազմի բռնված ըլլալովն շկրցավ անմիջական ձեռնարկ մը ընել: Սակայն երկու տարի հետո ծանրազին նվերներով ճամբա հանեց ղեպի նգիպտոս ղեսպանություն մը, որ կրակահանար իր երեք զինակիրներեն, Մանվել անունով հայ ասպետ մը³, որ առավ-փախավ խաչագող մըն էր, և Արագոնի թագավորին հորեղբոր Պետրոս Անդալուսիսէն, որ կիպրոսի Պետրոս Ա թագավորին աներն էր, ֆրանչիսկան կրոնավորներու կարգը ընդունած էր, և Գարգել քահանայէն: Պատգամավորները երբ Պարչելոնա հասան, Մանվել փախավ, դարձյալ շրջելու երկրե-երկիր Լեոնի փրկության անունով գրամ հավաքելու և շորթելու համար:

Արագոնի թագավորը հոն իրենց ընկերացուց նաև Բոնանատ Սապերա ղեսպանը, անոր կրկին տալով նամակ մը, ուղղված սուլթանին: Այս անգամ Բոնանատ Սապերա հանձն առած էր իր պատգամավորության ծախքը իր գրքպանեն ընել, մեղքնալով Լեոն Ե-ը:

Կասդիլիո և Արագոնի երկու թագավորներուն միացյալ ղեսպանությունը 1382 մայիս 21-ին Պարչելոնայէն ճամբա ելավ և երեք ամսվան տաժանելի ճամբորդութենէ մը հետո ժամանեց Աղեքսանդրիա (14 օգոստ.) և անկե իր ճամբան շարունակեց ղեպի Կահիրե, ուր ներկայացավ խնամակալ Բարկուկի և հանձնեց երկու թագավորներեն բերած թուղթերը և նվերները⁴:

Բարկուկ 1382 սեպտեմբեր 30-ին վերջապես հավանեցավ արձակելու Լեոն Ե-ը, որ յոթն տարի մնացած էր գերի Գահիրե: Լեոն Ե հոկտեմբերի 7-ին Աղեքսանդրիայէն հեռացավ Սպանիո երկու թագավորներուն ղեսպաններուն հետ, և Հոռոս հանդիպումէ մը հետո, զնաց Վենետիկ, ուրկի անցավ Ավի-

¹ Կղեմես Է պայպին մեկ գիրք ուղղված Տարաղոնայի արքեպիսկոպոսին 1381 հունիս 4 թվականով (տե՛ս Կ. Ն. Բասմաջյան, Լեոն Ե Լուսինյան, 1908, էջ 63-64), կհաստատե թե պայպը տված պետք է ըլլա իր հավանությունը աշուպիսի կարգադրութեան մը:

² Տե՛ս Կ. Ն. Բասմաջյան, Լեոն Ե Լուսինյան, էջ 65:

³ Մանվել ասպետ հավանորեն այն է, որ Կոստանդին թագավորի (1363—1372) կինը Մարիամ՝ Տարնդրո իշխանական առնմեն, Տարսոնի արքեպիսկոպոսին հետ զրկած էր 1371-ին հորդորելու համար իր մորը՝ Նովհաննա թագուհիին ազգականները, որ օգնութեան հասնին Կիլիկիո: Մանվել ասպետ բոս Այիշանի (Հայ-Վենետ, էջ 135) թեև ողորդ հայ, ծնած էր ձեռնովա և իր բնակությունը հաստատած էր Նարոլի:

⁴ Տե՛ս Կ. Ն. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 71—72:

նիոն, այցելելու համար իր ազատության աշխատող Կղեմես է պապին, որ անոր տվավ «Ոսկեղեն վարդ» պատվանշանը (1 մարտ, 1383): Լևոն Ե հետո անցավ Սպանիա Արագոնի և Կաստիլիո թագավորներուն հայտնելու համար իր երախտագիտությունն ու շնորհակալությունը:

Լևոն Ե երբ հասավ Արագոն (1383 ապրիլ), Պետրոս Գ, թագուհին, Լերոնայի դուքսն ու դքսուհին և իրենց որդին, նույնպես նաև պետական պաշտոնակատարներ և ժողովրդյան մեծ բազմություն մը թափոր կազմելով դիմավորեցին հայոց գահազուրկ թագավորը և հետևորդները, ընծայելով շատ մը պարգևներ: Իսկ Պետրոս Գ տարեկան թոշակ մը հատկացուց Լևոնի, որ կստանար մինչև իր մահը¹:

Արագոնե անցավ Կաստիլիա, որուն Հովհաննես Ա թագավորը այդ միջոցին Փորթուկալի թագավորին աղջկան հետ ամուսնանալու համար Բաղախոզ կգտնվեր: Հովհաննես Ա երբ իմացավ Լևոնի իր երկիրը գալը, զայն հատուկ պատգամավորությամբ առաջնորդել տվավ իր մոտ և հարսնիքը հետաձգեց, որպեսզի Լևոն ևս անոր ներկա ըլլա: Լևոն Ե գտավ փառաշուք ընդունելություն մը² և իր ժամանումին երկրորդ օրը (մայիս 17) կատարվեցավ Հովհաննեսի հարսնիքը մեծ խրախուժություններով և հայոց թագավորին կնքահայրությամբ:

Հարսանիքեն հետո երկու թագավորները գացին Լեոն քաղաքը, ուրկե հայոց թագավորը պահ մը բաժնվելով ուխտի գնաց Փալիսիայի ս. Հակոբ վանքը: Հետո միանալով Լեոնի մեջ, Վալառուխտի ճամբով գացին Սեղովիա (օգոստոս 14), ուր ժողովի հրավիրված էին Կաստիլիո եկեղեցական և աշխարհական աստիճանավորները և բոլոր իշխանները:

Այդ ժողովին ներկա եղավ նաև Լևոն, որ պատմեց, թե ինք ինչպես «ի սեր քրիստոնեության» Հայաստան անցավ և ձեռք առավ հայոց թագավորության ղեկը՝ հրամանով Ուրբանոս պապին, որ խոստացավ օգնել իրեն, բայց բան մըն ալ չկրցավ ընել. նկարագրեց, թե ինչպես կորսընցուց իր թագավորությունը և գերի տարվեցավ Քահիրե, ուր յոթը տարի տառապելե ետքը իր սիրելի եղբայրակցին՝ Կաստիլիո թագավորին շնորհիվ ազատեցավ: Վերջը խոսքը ուղղելով Հովհաննեսի, հետևյալ աղաչանքը ըրավ. «Հույժ սիրեցյալ տեր և եղբայրակից. որովհետև Աստված ձեր միջոցով հաճեցավ փրկել զիս բանտե. ուսկից բոլորովին մերկ կացության մեջ դուրս եկած եմ, խոնարհաբար կխրնդրեմ ձեզմե—որ բոլոր աշխարհի ծանոթ եք ձեր գործությունովն ու առատաձեռնությամբովն—որպեսզի հաճիք օգնել և նեցուկ ըլլալ ինձ իմ դիրքս պահպանելու և թագավորությունս վերականգնելու. իսկ ես և իմիներս՝ մինչև մեր վերջին շունչ երախտապարտ պիտի մնանք թե ձեզ և թե ձերիներուն»:

Հովհաննես հայտարարեց, որ հայոց թագավորին կնվիրե Մատրիտ, Վիլլարեալ և Անդուսար քաղաքները, որպեսզի Լևոն անոնց եկամուտներովը իր դիրքին համաձայն ճոխությունով իբրև թագավոր հայոց և իբրև տանուտեր այդ երեք քաղաքներու՝ ապրի մինչև իր կյանքին վերջը: Ասոնցմե գատ նվիրեց նաև շատ մը ոսկեդրամ, ոսկեղեն զարդեր, արծաթեղեն ամաններ, մետաքսե և ոսկեթել դիպակներ: Լևոնի տրամադրության տակ զրվեցավ նաև վեց ցականավ և վեց նավ, իրենց բոլոր կազմածներով, որպեսզի գործածե գանոնք, երբ փափաքի երթալ ձեռք բերել իր թագավորությունը, իսկ Ֆրանսիա

¹ Տե՛ս Կ. Հ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 78:

² Տե՛ս նույն տեղում, էջ 79:

Մաուրիտի» ի պատասխան նույն օրն իսկ կշնորհե հրովարտակ մը Մատրիտի քաղաքացիներուն, որով կհաստատե Մատրիտի վաղեմի առանձնաշնորհները և կխոստանա պահել նույնությամբ քաղաքին ինքնավարությունը:

Լեոն Ե Հայաստանի զահր վերադառնալու առաջադրությամբ դիմումներ քննելու համար 1384 փետրվար 28-ին կհեռանա Կասդիլիայեն և կդիմե նավար-րայի Կարլոս Ի թագավորին (1349—1387), որ կրնդունի զինքը պատվով, և կհրամայե տալ հարյուր զորական ու հարյուր աղեղնավոր, որպեսզի ան կարենա Հայաստան երթալ ու փրկել իր երկիրը, ինչպես նաև կնվիրե ոսկեզօծ արծաթե գեղաքանդակ նավ մը մեջը ղնելով 2000 արագոնյան ֆլորին:

Լեոն Ե նավարայեն անցավ Բեառն և այցելեց Ֆուալի իշխանության պետ Գաստոն Գ կոմսին (1343—1391), որ Ֆերյուս անունով ալ ծանոթ է— որ նույնպես խոստացավ հարյուր զորական և հարյուր աղեղնավոր՝ Լեոնի թագավորության փրկության համար: Անկե կրկին գնաց Արագոնի Պետրոս Ի թագավորին քով, որ արդեն խոստացած էր օգնել նավերով և զինվորներով, որոնք սակայն չկրցավ անմիջապես տրամադրել:

Լեոն Ե ապահովելու համար սակ աջակցությունը Ֆրանսայի և Անգլիո թագավորներուն, որոնց վրա մեծ հույսեր դրած էր, մեկնեցավ Սպանիայեն և անցավ Ֆրանսա, ուր հայտնի է, թե իր դիմումները ապարդյուն անցած են:

* * *

Սպանիա միջին դարեն սկսելալ խաշակրությանց բերած էր իր մասնակցու-թյունը և, ինչպես ըսի արդեն, այդ առթիվ էր, որ ընդհանուր կերպով Արևելքի և մասնավոր կերպով Հայաստանի և հայոց հետ հարաբերություններ ունեցած էր: Սպանիա, մասնավորապես գործոն դեր կատարած է թուրքերու դեմ մղված պատերազմներուն մեջ, իբր միջերկրական պետություն մը, մանավանդ այն օրերուն, որ ունեցած է շատ զորավոր նավատորմի մը: Այս առթիվ Սպանիա խառնված է Արևելքի գործերուն և նույնիսկ Օսմանյան պետության դեմ Արևելքի մեջ դաշնակիցներ ճարելու համար թաթարներու և պարսիկներու հետ հարաբերություններ մշակած է, իբր բնական դաշնակիցներ՝ թուրքերու դեմ կռվելու համար:

Այսպես, երբ Հունդարիո Սիգիսմոնտ թագավորին զլիսավորությամբ եվրոպացիք միացյալ ուժերով հարձակած էին թուրքերուն վրա և նիկոպոլսո մեջ աղետալի պարտություն մը կրած (1396), հուսահատ վիճակի մատնված էին, երբ ասպարեզ եկավ Թեմուրլենկ Արևելքի մեջ և մինչև Փոքր Ասիա առաջանալով հույսեր ներշնչեց, թե պիտի ջախջախեր Թուրքիան:

Արդարև Թեմուրլենկի 1402 հուլիս 20-ին էնկյուրիի ճակատամարտին մեջ տարած հաղթությունը Պալադիո Ա-ի դեմ և զայն դերի բռնելը, պահ մը ոգեվորեց Եվրոպայի քրիստոնյաները և անոնց հույսեր ներշնչեց:

Ինչպես կերևի թուրքերու դեմ Թեմուրլենկի մղած կռիվները համակրանքով կդիտվեին եվրոպացիներու կողմե, որոնք տրամադրություն ցույց տվին նույնիսկ զինակցելու թաթար վայրսոց աշխարհակալին հետ: Գհաստատվի թե նույնիսկ այս նպատակով Սպանիո Հենրի Գ թագավորը երկու դեսպաններ ղրկած էր Թեմուրլենկի, որոնք ներկա եղած են էնկյուրիի ճակատամարտին:

Այս երկու ղեկավարները Սպանիա դարձան իրենց հետ ունենալով Թեմուր-լենկի թափար ղեսպանը, որ կրեբեր Սպանիո թագավորին թանկարժեք նվերներ և քրիստոնյա զեղեցիկ ստրկուհիներ:

Այս ղեսպանության իրր փոխադարձությունն սպանիո թագավորը կրկին նոր ղեսպանություն մը, թափար ղեսպանին ուղեկցությամբ: Պատվիրակությունը կբաղկանար երեք անձերե, որոնք էին Հինրի Գ թագավորին սենեկապետը՝ Ռու Գոնցալից Կլավիհոն (Ruy Gonzales Clavijo), աստվաճաբան Ալպոնս Պալեց և արքայական թիկնապահներն Դոմեց տը Սալադար: Ասոնք կտանեին արժեքավոր նվերներ Թեմուրլենկին և իրենց հետ ունեին բազմաթիվ սպասավորներ:

Գեսպանները ճամբա ելան 1403 մայիս 22-ին Սանտա-Մարթայեն, և հոկտեմբերի 24-ին հասան Կ. Պոլիս, ուր մնացին ձմեռը: 1404 մարտ 20-ին մեկնեցան ղեպի Տրապիզոն, ուր հասան ապրիլ 11-ին և ներկայացան Պոնտոսի Մանվել Բ կայսեր: Տրապիզոնե մինչև Գավրեթ անոնք անցան Հայաստանեն: Այս բազմանդամ պատվիրակության անդամներեն ոմանք շկրցան դիմանալ ճամբու դժվարություններուն և մեռան Պարսկաստանի մեջ, ինչպես նիշափորի մեջ մեռավ Գոմեց տը Սալադարը:

Տասնհինգ ամիս ետքը իրենց Սպանիայեն մեկնումեն հասան Սամարղանդ, ուր ներկայացան մեծ աշխարհակալին, որ երբ հիվանդացավ, աճապարեցին դառնալ և 1405 փետրվար 1-ին հասան Գավրեթ, ուր պարտավորվեցան մնալ վեց ամիս և 22 օգոստոսին մեկնեցան և գացին Խոյ, ուրկե Արաշկերտի ճամբով հասան Տրապիզոն սեպտեմբեր 17-ին: Հոնկե 25 օրվան ծովային ճամբորդութենե մը հետո եկան Պոլիս, ուրկե դարձան ճենտական նավով մը իրենց հայրենիքը:

Այս ղեսպաններեն Կլավիհոն, որ 1412-ին մեռած է, գրի առած է ընդարձակորեն իր օրագրությունը, որ խիստ շահեկան էջեր կպարունակե Հայաստանի և հայոց մասին: Այս թանկագին վավերագիրը ուրեմն կպարտինք այն հարաբերություններուն, որոնք սպանիացիք մշակեցին Արևելքի հետ:

Քիչ հետո, Սպանիո կարևորությունը ավելի պիտի շեշտվեր, վասնզի մասնավորապես Ամերիկայի գյուտը այս երկրին հարստությունը պիտի բազմապատկեր և գայն նվրոպայի հզորագույն պետություններեն մեկը պիտի դարձրներ և պատկառանք պիտի ներշնչեր: Իր գորությունը արձագանք պիտի գտներ նաև Մերձավոր և Մայրագույն Արևելքի մեջ, մանավանդ երբ իրը կաթոլիկ երկիր մը, Հոմի պապերուն հրավերով և զրդումովը Սպանիա կմասնակցեր Թուրքիո ղեմ մղված խաչակրական պատերազմներու:

Այս առթիվ իրը Թուրքիո ղեմ կուրդ ուժ մը պարսիկներն ալ Սպանիո հետ հարաբերության մտան և հոն զրկեցին ղեսպաններ, որոնք հայեր էին:

Ինչպես հայտնի է, պարսից շահերը քրիստոնյա նվրոպայի հետ իրենց ղիվանագիտական հարաբերությունները նախընտրաբար հայոց վստահած են հին ժամանակներե սկսյալ մինչև վերջին տարիները: Գրեթե միշտ նվրոպայի մեջ կհանդիպինք բազմաթիվ հայերու, որոնք պարսիկ կառավարությունը կրներկայացնեին քրիստոնյա նվրոպայի մեջ:

¹ Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ե ս Հ ա կ ո ղ յ ա ն, Ուղեգրություններ, Ա հատոր, էջ 63—148 և Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց, Հայագիտությունն Արևմտյան նվրոպայում, Թիֆլիս, 1910, էջ Ի—ԻԲ:

Սպանիա զրկված են իբր պարսիկ ներկայացուցիչ հայեր, որոնք իրենց վստահված պաշտոնը ուղղամտորեն կատարած են: Այսպես, կհիշվի, թե 1585-ին Խյուտավենտ շահը զանազան նվերներու հետ զիր մը զրկած է Սպանիո Փիլիպոս թագավորին, հավանորեն հայ պատվիրակության մը ձեռքով, վասնզի այդ զիրը հայերու ձեռքով թարգմանված էր իտալերենի, հավանորեն Վենետիկի մեջ և ապա գերմաներենի վերածված և տպված նույն տարին:

Վենետիկի դիվաններուն մեջ կհիշատակվի շահին Երեք դեսպաններու իրզպոնա գալուստը և անկե Պարսկաստան առաքումը թագավորին դեսպանին, որ պիտի անցներ Իտալիայեն, Ասորիքեն և Եփրատի ճամբով պիտի երթար Պարսից ծոց Հյուսիս:

1610-ին Սպանիա դեսպան եկած է խոճա Սեֆեր որդի խոճա Ետիկյարի, որ սենեկապան էր շահին, զգոն և զգուշախոս երիտասարդ մը, 32 տարեկան, որ իրեն հետ ունենալով շահին թուղթերը, զիմած է Թոսքանայի դուքսին, Սպանիո թագավորին և Հոռմի պապին: Այս նպատակով անցած է Եվրոպա և Վենետիկի մեջ 1610 հունվար 22-ին ներկայացած է տոժին և հանձնած շահին թուղթը և Ծերակույտին ընդունելության և պատրվի արժանացած¹: Սակայն չենք գիտեր, թե Սպանիա ալ գացած է: Ամեն պարագայի մեջ շատ հավանական է, որ հոն ալ իր պաշտոնը կատարած ըլլա: Պարսիկ կառավարության կողմէ Սպանիա զրկված ուրիշ դեսպաններու հիշատակությունը չկա, թեև շատ հավանական է:

Սպանիո թագավորին հեղինակությունը այնքան մեծ էր աշխարհի մեջ, որ Արևելքի քրիստոնյա ազգերը միամիտ հավատքը ունեցած են անոր զիմելու իրենց փրկության համար, երբեմն ալ նույնիսկ իրենց ներքին վեճերուն համար անոր իրավարարությունը խնդրած:

Արևելքի ժողովուրդներու՝ Սպանիո երբեմն ամենազոր թագավորներուն վրա հուսադրության ապացույցը կուտան մեզի երկու վավերագիրներ՝ մին հայերեն և մյուս հունարեն, պահված Կասդիլիո դիվաններուն մեջ, որոնք հիմա կանան Սիմանոբաս, Վալատոլիտի մոտ:

Այս վավերագիրներեն հայերենը նամակ մըն է ուղղված Վրաստանի Սիմեոն թագավորեն (1558—1600), 1595 օգոստոս 14 թվականով, Սպանիո Փիլիպոս Թ թագավորին (1556—1578) անկե խնդրելու համար, որ իբր պետք արևմտյան կաթողիկոսներու, միացնել Եվրոպայի մյուս տիրապետները և կազմակերպել նոր խաչակրություն մը, փրկելու համար Արևելքի քրիստոնյաները թրքական բռնակալություններեն և անոնց օգնել տիրելու համար Երուսաղեմի մեջ Քրիստոսի գերեզմանին:

Սիմեոն թագավոր իր կողմեն կհավաստե Փիլիպոս Բ-ի, որ ինքն կազմած է 14 տարի, այսինքն 1582-են ի վեր, զաշնակցություն մը Կախեթի Ալեքսանդր թագավորին՝ և պարսից Շահ-Աբրահամին (1587—1629) հետ պատերազմելու համար թուրքերու դեմ, որ անողոք խստությամբ կվարվեին Արևելքի քրիստոնյաներուն հետ:

Այս խնդրանքը անմեկնելի չէ, երբ մտածենք թե օսմանյան նավատորմի ընդ ևրև ոչ բոլորովին փչացած, զեթ պարտված էր ավստրացի Տոն Ժուանեն 1571

¹ Սիսական, էջ 419:

² Սիմեոն գայն կկոչել «Թագավոր Արևելքի»: Այդ միջոցին Վրաստան բաժնված էր երկու բի՝ արևմտյան մասին կիշխեր Սիմեոն, իսկ արևելյան մասին կիշխեր Ալեքսանդր:

հոկտեմբեր 10-ին Լեբանտի հաշակավոր նավամարտին մեջ, տըր թուրքերը կորուսած էին 30.000 զինվոր, 200 նավ և 600 խնդանով, իբր հետևանք պատերազմի մը, որուն պատճառ եղած էին իրենց Կիպրոսը գրաված ատեն գործադրած խժողովությունները: Պիոս Թ պապը ազդված այս բարբարոսությունեն քարոզած էր խաչակրություն մը, որուն իրենց մասնակցությունը բերած էին Սպանիո Փիլիպոս Բ թագավորը, մալթացի ասպետները, ճենովացիք և վենետիկցիք:

Թուրքերը այս պարտությունեն ետք ավելի լարվեցան քրիստոնյաներուն դեմ, մանավանդ անոնց, որ իրենց հպատակներն էին և սկսան ավելի շարշարել և կեղեքել զանոնք: Ուստի զարմանք պետք չէ պատճառե վրաց թագավորին խնդրանքը թուրք վարչության դեմ:

Քանի տըր Սպանիա գլխավոր դերակատարն էր այս դաշնակցության, որ թուրքերու դեմ այդ հաղթանակը շահած էր, բնական է, որ քրիստոնյա Արևելքի ակնարկները դեպի հոն ուղղվեին, մանավանդ որ այս հաղթանակը կարծարծներ երբեմնի խաչակրություններու ասպետական ոգին, ինչպես կհաստատե H. Forneron իր «Պատմություն Փիլիպոս Բ-ի»¹ գործին մեջ: Forneron կհիշատակե, որ «Կղեմես Ը պապը 1593-ին Մատրիտ ղրկած էր առաքելություն մը՝ խնդրելու համար Սպանիո օգնությունը ընդդեմ թուրքերու և թելագրելու համար իբր առաջին մտածում Ֆրանսայի հետ հաշտություն մը: Հետո 1595-ին ղրկած էր իր քեռորդին Giovanni Francesco Aldofrandini-ն Փիլիպոսին մոտ»²:

Վրաց Սիմեոն թագավոր արդեն նման կոչ մըն ալ Հոռոմի պապին րրած էր ավելի առաջ և պատասխան ստացած չըլլալով, 1595-ին կղիմեր Սպանիո թագավորին՝ Փիլիպոս Բ-ի:

Զարմանալի է, որ իր գիրը փոխանակ իր բնիկ լեզվով՝ այսինքն վոացերեն ըլլալու, հայերեն է: F. Macler, հրատարակելը այս վավերագրին³ կկարծե, թե հայ լեզուն գործածված է նկատելով զայն ավելի ծանոթ և անոր կցված է հունարեն պատճեն մը, որ եթե հայերենը հասկանալի չըլլա Սպանիո արքունիքին մեջ, հունարենը ներկայացվի: Ես կխորհիմ այլապես: Հունարենի համար կարելի է մտածել թե անիկա Եվրոպայի մեջ ալ ծանոթ լեզու մը ըլլալուն համար գործածված ըլլա, սակայն այս տեսությունը հայերենի համար շատ հավանական չի թվիր:

Հայերեն բնագիրը ավելի մտածել կմղե գիտ, թե Վրաստանի թագավորին այս գիրը ղրկված է Սպանիա հայ պատվիրակության մը ձեռքով կամ անիկա ուղղված է Սպանիո թագավորին, հոն՝ այդ երկիրը հաստատված հայոց թելադրությամբ: Նկատի անենալով պարսից շահերու կողմեն Եվրոպա ղրկված դեսպաններու շատ անգամ հայերեն առնված ըլլալը և այդ թվականներուն հայոց՝ Վրաստանի մեջ ունեցած դիրքը, անհավանական չէ մտածել, թե հայեր էին, որ այս թուղթը տարին Սպանիո թագավորին: Հայերը՝ իբր շահակից, համաձայն պետք էին ըլլալ այս տեսակ ձեռնարկի մը, որուն հաջողությունը իրենց ալ ազատագրությունը պիտի ըլլար. ուստի շատ հավանական է, որ իրենք ալ գործակցած ըլլան այս գործին: Հետո նկատելի իրողություն մըն է, որ հույն բնագիրը, որ իբր հայերենին թարգմանությունը կներկայացվի, զգալի

¹ Forneron, Պատմություն Փիլիպոս Բ-ի (Ֆրանս.). Փարիզ, 1882, հատոր Բ, էջ 206:

² Նույն տեղում, հատոր Գ, էջ 281:

³ REA, I, էջ 70:

տարբերություններ ունի հայերեն բնագիրեն և կարծես թե անչափ խմբադրու-
թյուն մըն է¹:

Ես հոս կարտագրեմ հայերեն բնագիրը, որ կնկատվի սկզբնական պատ-
ճենը:

«Ի յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գրեմ զայս նամակ սիրոյ և
համբոյր սրբութեան առ թագաւորդ թագաւորաց և զլուս յամենայն հաւատա-
ցելոցս ի Քս. և իշխող եւ պարծանք յամենայն թագաւորաց եւ քրիստոնէիցս
ի Քս ով սբ. թագաւորդ գէ Տոբիթէ. ընկալ զայս թուղթս ի քո ծառայէս.
առ ոտս քո խոնարհիմ եւ զզլուխս ի ներքեւ ոտից քոյ գննմ և ապայ զբերան
իմ բանամ և խաւսիմ խոնարհութեամբ իբրեւ զծառայ տեառն իւրոյ եւ եթի,
ի Ք-ին մեծութեանդ և փառաւոր թագաւորութեանդ հրամանք տաս խաւսելոյ
իբրեւ զծառայ առ ոտս քո. ես Սիմէոն խանս Կուրճիստանու որ իմ ի վերայ
յերկրի՝ իմ յիշխեցող գիտութիւն լիցի քոին վեհ իմաստութեանդ որ այսքան ժա-
մանակ ի թուրքի հետն ի մէջ նեղութեան կայեաք. այս ժամանակիս կու հա-
յեաք. թէ քրիստոնէից թագաւորութիւն ի ոտք ելանէ եւ շարժի, հիմի մեծ գոհու-
թիւն եւ փառք անմահ թագաւորին Յսի. Քսի. որ իր գաւրութիւն եւ հզար կա-
րողութիւն քոին մեծ թագաւորութեանդ եւ իշխանութեանդ եւ քոին սիրելի մա-
յեսդագ շեղար ինփիռատուրին, որ զմեզ մեծարեց եւ ողարկեց առ ճեզ
թուղթ եւ գիր սիրոյ եւ միաբանութեան, վասն յամենայն հաւատացելոցս ի Քս.
որ զայս այլ յազգի և զթշնամի հաւատոց զթուրք ազգս ի միջոց վերացնելոյ.
նայ ես Սիմէոն խանս Կուրճիստանու, Ալեքսանդր խան Լուանդինոյ, շահ-
ապաս փերսիանին, երեանքս միաբանեցանք եւ խորհուրդ եւ թատպեր արա-
րաք, որ մենք այլ հիմիկուց ի վեր առաջ գանք եւ զթուրքի զլուխն կոտրեմք և
զՍբ. յէրուսաղեմ եւ զքրիստոնեանքն ի թուրքի ձեռաց ազատենք, հիմի քոին
մեծ թագաւորութեանդ խնդիրք աղաշանք պաղատանք կանեմ, որ մայիսդագ
շեզարին մեջք լինես եւ չի թողուս, որ թուրքի հետն պարշտութիւն անէ, որ մեզի
նեղութիւն չիգայ հաւասար մեր ազգին եւ ամենայն քրիստոնէից, զի մինչեւ
ի մահ ես եւ իմ յիշխեցողքն վասն Քսի հաւատոցն զշարշարանքն եւ զմահ
իյանձ եմք առեր. որ մեր ժամանական տեսանեմք զՍբ. յէղմ. եւ զՔսի սբ. գե-
րեզմանն ի քրիստոնէից ձեռն ի թագաւորութեան եւ եթէ զքո ծառայդ զՍի-
մոն խանս հարցման արժան առնես, նայ կամ աստուծոյ ողորմութեամբն
հաստատ ի վերոյ հաւատոցս քրիստոնէութեան եւ ի մինչեւ ցմահ շարշարիմ
վասն Քսի սիրուն եւ քոին մեծ թագաւորութեանդ եւ վասն մայիստատ շեղար
ինփիռատուրին, որ առաջն մեզի թուղթ եւ խաւսք ողարկեց եւ զմեզ իստեց վե-
րայ կանցուց վասն Քրիստոնէից համար ի քոյն մեծ թագաւորութեանդ խըն-
դերք աղաշանք կառնեմ որ զիս չի մոռանաս ի քո ծառայութիւն եւ զիս ան-
տես շառնես թղթի կամ բանիւ եւ զայս թղթի պատասխանս ի թղթի բերաւդն
տաս գայ յիս հասանի. որ ես այլ ուրախանամ եւ իմ լերկիրս, եւ դարձեալ
ի փերսէանի թագաւորն ապսպրես զինւոր միաբան լինեմք ու լաւ բան հո-
գամք վասն քրիստոնէից համար ու տայիմ զիս չի մոռանաս. թէ բանիւ եւ թէ
թղթով մաւ տառիս ծանուցանես. ողջ լեր ի տէր ողջունեալդ ի հոգոյն սրբոյ.
Թագաւորդ թագաւորաց բաւ է քոյն վեհ եւ մեծ իմաստութեանդ: Գրեցաւ թուղ-
թս յերկիրն Կուրճիստան ի թագաւորանիստ քաղաքն Տրփիսիս ի թվ. հայոց,
Թեհն (1596) օգոստոս ամսոյ ԺԴ (14)»:

¹ Տե՛ս REA, I, էջ 78—80:

Այս շատ հետաքրքրական վավերագիրը, որուն առաքման զրդիչներուն և զայն ներկայացնողներուն մեջ հայերու գոյութիւնը անժխտելի է, կհաստատուի թէ Սպանիոյ փառքին և մեծութեան ժամանակամիջոցին իր ազդեցութիւնը մինչև Արևելքի խորերը արձագանքած էր և Արևելքի քրիստոնյաները զիմած են Սպանիոյ ամենաազդեցիկ թագավորներուն:

Սպանիացի պատմիչ մը՝ Ֆիկերսա, կհաստատուի թէ 1618-են առաջ Գալիլիոյ Վազարչապատեցի կաթողիկոսը (1579—1629) իր ամուսնացեալ Մելքիսեղիկ Գառնեցիի (1593—1628) հետ ունեցած անհամաձայնութեան համար, զիմած է Սպանիոյ թագավորին, անոր զրկելով Սիմեոն անուն վարդապետ մը, որպէսզի անիկա իրավարար կամ հաշտարար հանդիսանա:

Սպանիացի պատմիչին խոսքերը մեջ չէ բերած Ալիշան որոշ գիտնալու համար. թէ ի՞նչ տվյալներու վրա կխոսի ան, սակայն կարելի է մտածել, թէ Սիմեոն վրդ. զրկված է Սպանիոյ թագավորին Սիմեոն Վրաստանի թագավորին զիմումին պէս զիմում մըն ալ հայոց կաթողիկոսին կողմէ բնելու համար Սպանիոյ շրջակայքէն թագավորին, սակայն ասիկա կմնա: Ենթադրութիւն մը, որուն փաստը կպակսի մեզի զժրախտարար:

Սպանիոյ փառքին և զորութեան այս շրջանը տեսական չէ եղած և Սպանիոյ կորսնցուցած է Եվրոպայի մեջ իր զիրքը և հեղինակութիւնը Ռաֆայէլի նավամարտին մեջ իր ջախջախիչ պարտութեամբ (21 հոկտ. 1805), որմէ վերջ ծովերու տիրողը դարձած է Անգլիոյ:

Սպանիոյ քաղաքական փառքին անկումն հետո հայերը այլևս չէին կրնար ունէ ակնկալութիւն ունենալ անկէ և այդ թվականն էտք արդարեւ չենք հանդիպեր որեւէ զիմումի՝ Սպանիոյ արքունիքին ուղղված:

* * *

Բնչպէս տեսնուցեալ, Հայաստանի և Սպանիոյ մեջ քաղաքական գետնի վրա և կրօնական պատճառներով հարարերութիւններ գոյութիւն ունեցած են: Այս հարարերութիւնները ստեղծած են երթևեկ երկու երկիրներու միջև և Հայաստան այցելող սպանիացիներ և Սպանիոյ այցելող հայեր գտնված են, սակայն սպանական գաղափար մը Հայաստանի մեջ գոյութիւնը բնավ հիշված չէ, ու շատ բնական պատճառով, որ Ամերիկայի մեջ բնդարձակ երկիրներու տիրապետած ըլլալով, սպանիացիք այդ նվաճված երկիրները երթալ նախընտրած են իրր տիրողներ առանձնաշնորհյալ զիրք ունենալու առավելութեամբ:

Հայերը, զժրախտարար բնդհակառակը, իրենց սեփական անկախ երկիրը շունեին, ուր ապաստանեին, հետեարար գաղթած են նախընտրար քրիստոնյա երկիրներ և հոն տեղերը հանգիստ և ապահովութիւն որոնած են, մասնաւորապէս իրր առևտրական և ճարտարագործ:

Սպանիոյ, որ միջին դարն էտք այնքան փայլուն զիրք մը ունեցած է, իրր գաղթային բնդարձակ և հարուստ պետութիւն մը, չէր կրնար վրիպել հայոց ուշադրութեանն թէ անիկա համեմատարար բավական հեռու եղած ըլլա Հայաստանն: Սակայն Սպանիոյ քրիստոնյա մեծ պետութեան մը հանդամանքը, որ օրեօր ավելի շեշտված է, անխուսափելի կերպով հայերէ ոմանք պիտի մղեր դեպի Արևմուտք և ի մեջ այլոց նաև Սպանիոյ, ուր մի գործ վերջին քառորդին զիմած է Լեոն Ե Լուսինյան կիլիկիոյ թագավորը իրր կաթողիկոսի Եվ ինչպէս տեսնուցեալ սպանիացիներու ջանքերուն ազատած էր դրութեան և գացած էր Սպանիոյ, ուր Մատրիտը ցմահ տիրույթ ստացած էր:

Ինչպես տեսնվեցավ, մինչև Լևոն Ե-ի ազատ ձգվելը իր մարդիկը Սպանիա գացած և դիմումներ կատարած են Արագոնի և Կաստիլիո և Նավարրայի թագավորներուն, որոնցմե Պետրոս Դ Արագոնի թագավորը (1336—1387) աշխատած է Եգիպտոսի սուլթանը համոզելու, որ Լևոն Ե-ը ազատ արձակե: Ասկե քաջալերված՝ Լևոն Լուսինյան իր խոստովանահայրը Հովհաննես Դարդել քահանան, Անտոն քհն.-ի մը հետ, 1379-ին զրկած է Սպանիա:

Հոն Լևոն Ե-ի ներկայացուցիչները քաջալերություն չեն գտած: Միայն Դարդել հաջողած է Արագոնի պետության մեջ գտնվող բոլոր եկեղեցիներու եկամուտը հատկացնել տալ Լևոնի փրկության գործին:

Երբ Կաստիլիո Հովհաննես Ա թագավորը (1379—1390) իր կարգին Եգիպտոսի սուլթանին կղիմե պատգամավորությամբ մը, անոր մաս կկազմե նաև Մանվել հայ ասպետը, որ ճենովա ծնած էր և իր բնակությունը հաստատած էր Նաբոլի: Այս ասպետը, որ, ինչպես ըսինք, խաչագող մըն էր, Պարչելոնայի մեջ խույս տվավ և բաժնվեցավ պատգամավորութենեն և սկսավ շրջիլ երկրե երկիր, իբր թե Լևոնի փրկանքը հավաքելու համար: Այս շարաշահը ի՞նչ եղած է ետքը, անհայտ կմնա մեզի:

Լևոն, որ գերութենե ազատելե ետք Մատրիտ հաստատվեցավ, Բարգելեն զատ ուրիշ հետևորդներ ալ պետք է ունեցած ըլլա, որոնք չեն հիշված որոշապես, թե որոնք էին: Ասոնցմե Սպանիա հաստատվողներ եղած են, թե իրեն հետ Սպանիայեն հեռացած են, չենք գիտեր, սակայն շատ հավանական չէ, որ անոնք Լևոն Ե թագավորեն բաժնված ըլլան:

Այդ գարուն կրնա ըլլալ, որ քանի մը հայեր պատահորեն Սպանիա գացած են, բայց մեզի կպակսի տեղեկություններ, վասնզի որևէ հիշատակություն չկա մինչև ժՁ դար հայերու, որոնք Սպանիա այցելած կամ հաստատված ըլլան:

ԺՁ դարուն վերջերը Մատրիտ այցելած է դափանցի Փիրզադե անուն արկածախնդիր տղա մը, որ 1586-ին իր ծննդավայրեն մեկնած է պարզապես հետաքրքրությամբ օտար աշխարհներ թափառելու համար: Բրմե մնացած պատահիկ մը կթվե իր շրջած քաղաքները, որոնց մեջ կհիշվի նաև Մատրիտը:

Ահա այդ թղթիկը:

«Ես մեղավոր Փիրզատա դիգիրպաշեն, երկիր Ղապանէն իւրոտէն ձորէն, կեղոս (ի գեղջէն) Գետաթաղեն, պաստամեցէց (բաստամանց) ասքեն¹, Զաքերի թոռն, Մերզին (եւ) Հոոմսիմին տաղայ (տղայ), Իսայուն, Փարուն, Պահալվէն տղբեր, էն տարին որ Հայոց թվ. էր ՌԼԵ (= 1586), որ ես իմ տանէն ելայ, գլուխս առայ, ասկական մուրորեցի, օտար աշխարհ եկայ: Առչի քաղաքն վան, ինկից ելայ կինեցի Պաղիշ² քաղաքն, էնկից կինեցի Հիզու³, եվ կը շարե միւնույն ձևով «Գարա Համիտ⁴, Ուրֆա⁵, Անթաքիա, Ատանա, Գոնիա, Գարահիսար, Քեթաշիա, Իղնիք, Իզնեմիր, Սթամպուլ, էտիրնէ, Ղարապուզտան⁶, Եաշ, Լեհաստան, Կամինից, Իլով, Զամսցայ, Գրայքօք, Վարշավիա,

¹ Ազգեն:

² Բաղէշ:

³ Քիզա՞ն արդյոք:

⁴ Որ է Տիարպերիք:

⁵ Եղեսիա:

⁶ Վալարիա:

Տանձիկ, Ալամանաց երկիր, Բբակա, Իտալիա, Վենետիկ, Անգոնա, Հոռոմ, Նաբոլի, Սիկիլիա, Մալթա, Ֆիլորենա, Լուրաչ, Միլան, Թորինո, Մատրիտ, Անգլիա, Տանիմարբա, Սկովտիա, Շուէտ և Բարիզ» (ձեռագիրը պակաս)¹։

Այդ թվականեն հետո Սպանիո մեջ կպատահինք հայերու, որոնք առհասարակ առևտրական գործողություններ կկատարեն։

Այլևս Սպանիա ստացած էր մեծ կարևորություն, վասնզի հարյուր տարիելի վեր Ամերիկան գտնված էր և կշահագործվեր սպանիացիներն և ոսկի կհոսեր դեպի Սպանիա։

Առևտրականի հոտառությունը ունեցող հայեր, անխուսափելի կերպով պիտի երթային իրենք ալ Սպանիա, առևտրական գործառնություններու համար։ Հոն թերևս տարած են արևելյան ծանրագին և հազվագյուտ ապրանքներ, որոնք գնելու համար դրամ չէր պակասեր Սպանիո մեջ։ Դժբախտաբար շատ պատահորեն կհիշվին այդ հայերը, որոնք սպանիացիներու հետ և Սպանիո մեջ գործած են։

Արկածախնդիր զափանցի Փիրզատե երիտասարդեն տասներեք տարի ետքը՝ 1599-ին 23 տարեկան ուրիշ Սիմոն անուն երիտասարդի մը, հայրը՝ Անտոն որդի Հայրապետի, զինքն զրկած էր Կրանատա և Սևիլիա պահանջելու համար Ալվարես Տավիլա անուն սպանիացիին իր փոխ տված 600 ռեալը։ Ուրեմն Անտոն Հայրապետյան սպանիացի Ալվարես Տավիլայի հետ առևտրական կամ դրամական գործառնություններ ուներ։ Անտոն կամ Սպանիո մեջ և կամ Հայաստանի մեջ հարաբերություն ունեցած էր սպանիացիին հետ և 1599-ին իր պահանջքն զանձելու համար իր տղան զրկելու կստիպվեր։

Ժ է գարու սկիզբեն մինչև ժԸ գարուն կեսերը անընդհատ հայ հիշատակներ կան Սպանիա, մանավանդ Քատիքս, Սևիլիա, Պարչելոնա։ Ադամ անուն հայ մը 1608-ին դեպի Սպանիա ճամբորդած ատեն նավուն մեջ կմեռնի և իր զավակը և եղբայրը, որոնք կգտնվին Վենետիկ, անոր Սպանիո մեջ ունեցած ինչքերը պահանջելու համար փոխանորդ կնշանակեն Անտոն Զուղայեցիին ի կեծկո², ինչ որ կնշանակե թե այս վերջինը Սպանիա հաստատուն բնակություն ունեցող հայերեն մին էր։ Հոն էր այդ ժամանակները նաև Հ. Անդրեաս ունիթոո հայ վարդապետը, որ պարտականներեն մին էր հանգուցյալին։

Կհիշատակվին նաև այդ թվականներու տուրիշ հայեր, ինչպես 1616-ին Սիմոն որդի Հովսեփի, որ կանոնե ինչքերը տրիպոլսեցի Հովսեփի որդին Հերոնիմոսի, որ 1611-ին մեռած էր Սևիլիա։ 1623-ին Սուրիաս Մոկացի Վենետիկին մեջ կխոստանա Բահսի Զուղայեցիին իր պարտքը վճարել ի Սպանիա կամ ի Ճենովա, 1617-են 1637 շատերու գործակալ կրլլա Սևիլիո մեջ Լորենց որդի Մարտիրոսի հայազգին։ 1624-ին Հովհաննես որդի Պողոսի կպատվիրեր Երուսաղեմ զրկել արծաթը, որ Սևիլիայեն պիտի գար։ 1638—1639-ին Գևորգ որդի Հակոբ Պայազիտցիի, կմնա Սևիլիա իր հորը՝ Հակոբի հետ, և կղրկեր հետո Վենետիկեն Սպանիո մյուս քաղաքները յոթն անտուկ ուլունք։ 1654-ին Մկրտիչ որդի Կիրակոսի պարտական էր 530 Սևիլիայի ռեալ առ Սահակ որդի Առաքելի։ 1661—1667-ին Պուտախ և Մնացական որդիները Ռոստոմի, Սևիլիա էին, ուր կերթնա նաև Պուտախի փեսան՝ Մարտիրոս որդի Մկրտիչի։

¹ Այիշտն, Սիսական, էջ 220—221։

² Նույն տեղում։

1662-ին Քատիքս էին Ավետ և Պիլատ եղբայրները, որոնցմե իր սնտուկը կինդրե Հայրապետ Փիրզատե՝ Վենետիկեն: Հոն էր նաև 1664-ին Թևում Քյահյան և կային անոր քով 253 փերթեր սպիտակ ցփսիներու և Մկրտիչ Հովհաննես հոն կղրկեր Ավետ Մելգոնը, զանոնք բերելու:

1676-ին Սպանիա էր Թորոս Վարզանովիչ՝ եղբայրը Ստեփանոս զրազետ վարդապետին:

Ժէ դարուն վերջին քառորդին Մերիմանյանց մեծահարուստ ընտանիքը Քատիքսի մեջ հաստատած էր զործատուն մը նման անոնց, որ Վենետիկի և Լիվոնոյի մեջ հիմնած էր: ԺԸ դարուն անոնց զործակալը՝ Պողոս որդի Թադեոսի, Քատիքսեն ցորեն կղրկեր Լիվոնոն:

1685-ին Աղա Մաթուս զրկած էր Քատիքս Գրիգոր Ոսկանի 227 լիպրա խաշընդին, որուն զինը կպահանջեր 1690-ին հանձնել հոն՝ Հովհաննես որդի Զարարիայի և Մանուկ Մինասյանի, որոնք հո՛: Հաստատված կամ այնտեղի հետ երթևեկ ունեցող առևտրականներ էին:

1695—1696-ին Վարդան անուն հայ մը Ալիկատեի մեջ առևտուր ուներ և կղրկեր նաև Մատրիա Բաղդասար անուն ուրիշ հայու մը տեսակ-տեսակ թանկագին արևելյան ապրանքներ: Ասոր քովը Քատիքսի մեջ իբր ծանոթ վեցամիս (1719—1730) ապրեցավ Հարություն կպիսկոպոս Կեսարիո Պաղեստինի (արդի Իսազա քաղաքը):

Նույնպես հոն այցելած էր Այնթապի առաջնորդ Ներսես կպիսկոպոս Ծուրբերան: Այս միջոցին ի Քատիքս կապրեին բավական թվով հայ ընտանիքներ. ինչպես Պաղատասարը և տ. Հարությունի որդի Եղիսեն, որ կղրեր անկե 1737-ին, թե կին և որդի ուներ:

Միշտ նույն թվականներուն կհիշվին նաև ուրիշ հայեր, որ Սպանիա հաստատված ըլլալ կթվին: Այսպես 1751-ին կհիշվի պր. Ֆիտան, որ մեռած է Սպանիո մեջ:

Շքոտեր, հեղինակը հայ-լատին քերականության (1711), հայ վաճառականներու երթևեկած երկիրներուն առաջինը կղասե Փորթուկալը ոչ անշուշտ առանց փաստի և երևակայությամբ: Եթե ճիշդ է այս, անհավանական է, որ հայերը նաև զրացի երկիրը և անոր պես այդ ժամանակամիջոցին գաղթային ընդարձակ առևտուր և պերճ ու հարուստ կենցաղ ունեցող երկիրը՝ Սպանիա ալ հաճախած չըլլան: Նկատելի իրողություն մըն էր, որ ժէ և ժԸ դարերու Արեւելքի մեջ հայերը պառակտված էին կրոնական պատճառներով: Կաթոլիկությունը պատճառ եղած էր զրգություններու և հալածանքներ զործադրված էին: Նույնիսկ արյունալի դեպքեր պատահած էին և մուսուլմանության զոհ եղած էին կաթոլիկության հարած հայեր:

Այս շփոթություններու մեջ 1707-ին զլիսատված էր Կոմիտաս քահանա Քյոմյուրճյան իբր կաթոլիկ: Ոմանք ուրացությամբ կամ փախուստով փրկված էին, ինչպես Կ. Պոլսո նախկին պատրիարք և Կիլիկիո կաթողիկոս Մաթեոս Սարըն, որ իր կյանքը փրկելէ վերջ Հոռոմ ապաստանած և մինչև իր մահը հոն ապրած է:

¹ Ուղագրով է, որ 1586-ին արկածախնդիր գափանցի տղան, որ հետաքրքրության համար Սպանիա ալ դացած էր շատ երկիրներու կաբղին, Փիրզաղե կկոչվեր: Թերևս նույն ընտանիքեն էր այս:

Այս հալածանքներն խույս տվողներու մեջ կային անշուշտ կարգ մը կաթողիկոսներ, որոնք Սպանիա ապաստանած են Արևելքն հեռանալով, ճողոպրելու համար հալածանքներն և գառած են Սպանիա և սպանական տիրապետության ենթարկված նարոլիի և Սիկիլիո թագավորությանց երկիրները:

Ասոնցմե մեկն էր Հովհաննես Քյոմյուրճյան, երկրորդ որդին Կոմիտաս քահանայի, որ իր հոր նահատակութենեն (1707) ոչ շատ վերջը ապաստանած է Հռոմ, ուր կգտնենք զինքը 1720 նոյեմբեր 23-ին¹: Անտոն քահանա Մխիթար Աբբայի կգրե, թե «Տէր Կոմիտասին տղան առողջապես կարէ այժմ շրջիլ, և աւուրն մին նուրի թոշակ եղեւ նմա ի սրբազան Պապէն»:

Այսպես, հովանավորված է կաթողիկ եկեղեցվո պետնն, որուն հանձնարարութեամբ հավանորեն սպանիական կառավարության ծառայության մտած է իբր թարգման սպանիական տիրապետության տակ գտնվող Իտալիո նաբոլի քաղաքը, և պաշտոնավարած է Summarium super du bio au Constet de Martyrio (Gomidac de Carbognano, էջ 207), մինչև 1763 ապրիլ 23, ինչպես կհասկնանք:

1763 մայիս 19 թվականով Կ. Պոլիսն հ. Իգնատիոս վարդապետի Ստեփանոս արքային ի վենետիկ գրած մեկ նամակին, ուր ի մեջ այլոց կգրե, թե «Որդի երանելի Տէր Կոմիտասին Յովհաննէս թարգմանն նկատելիս Սպանիոյ անկեալ բարձունց տան իւրոյ զամիսն չորս կրեաց զհիւանդութիւն կոտորուածոյ ոսկերացն և վիրաց մարմնոյն, և բազում համբերութեամբ տարեալ հանգեալ ի տէր յաւուր սրբոյն Կէորգայ ե յԱպրիլի 23, ըստ հնոյն, որպէս եւ հայր նորա կատարեցաւ յաւուր տօնի Դեմեդրեայ վեցին, եւ դեսպանն ետ թաղել զնա ի Սանթա Մարիա...»:

Ասոր որդին էր Կոզմաս կամ Կոմիտաս Քյոմյուրճյան (Cosma de Carbognano), որ 1771-ին 22 տարեկան պատանի մըն էր, նույն թվականին 26 ապրիլ թվականով Կ. Պոլիսն Մխիթարյան Աբբային ուղղված Զարբարիա վարդապետի նամակին մեջ կկոչվի «Տիւղլանի³ Անափոլիի⁴ էլչու», որ որդին էր վերոհիշյալ Հովհաննէս թարգմանին, ինչպես վերստին կշեշտե չաքարիա վարդապետ:

Կոզմաս Քյոմյուրճյան, որ ձեռնարկած էր շարադրել իր հորը տ. Կոմիտասի կենսագրութիւնը, կխնդրե Մխիթարյան վանքն հ. Մատթեոս վարդապետի գրած կենսագրությանը ընդօրինակութիւնը, աղբյուրները թվելով⁶:

Կոզմաս Քյոմյուրճյան թարգման եղած է Կ. Պոլսո սպանիական դեսպանատան⁷, իր օտարացած անունով de Cosimo Comidas de Carbognano, գրած է իտալերեն լեզվով գործ մը՝ Descrizione Topografica de'le stato presente de Constantinopoli (նկարագրութիւն Կ. Պոլսո), տպված Bassano, 1794-ին⁸:

Բայց Թրաֆալկարի պարտութենեն (21 հոկտեմբեր 1805) ետք Սպանիա կորսնցուց իր կարևորութիւնը: Հոն հաստատվող և գործող հայերու անուն-

¹ Տե՛ս Մայր Դիւան Մխիթարեանց վենետիկոյ, էջ 283:

² Նույն տեղում:

³ Տիւղլուէի, Գարուողլանի-ի կազմութիւնն ունի, թարգմանի իմաստ կրնա ունենալ:

⁴ Նաբոլի բսել կուղե:

⁵ էլչի-դեսպան:

⁶ Տե՛ս Մայր Դիւան Մխիթարեանց վենետիկոյ, էջ 267:

⁷ Հ. Գ. վրդ. Ինճիճյան, Աշխարհ. շորից մասանց աշխարհի, 1804, հտ. Ե, էջ 156:

⁸ Տե՛ս Հ. Գ. վրդ. Ինճիճյան, նույն տեղում, էջ 182. նաև տորթ. Վահրամ Թորոգոմյան, Երեմիա Զելեպի Քյոմյուրճյան, Սամբուո պատմութիւն, էջ 47:

ները չեն հիշվիր այլևս, թեև կարելի է հայեր շատ ցանցառ թիվով հոն հաստատված և ապրած ըլլան:

* * *

Հայերու և սպանիացիներու փոխհարաբերությունները շատ մեծ չեն եղած, ինչպես տեսնվեցավ: Բնավ հոծ գաղութ մը Սպանիո մեջ չէ ապրած, այլ ինչպես տեսնվեցավ, միայն բեկորներ ապրած են Պիրենեյան լեռներու հարավակողմը:

Սպանիացի մոլեռանդ կաթոլիկ վարդապետքը շատ անգամ նույնիսկ առանց ճանչնալու հայր, եկած են հայոց մեջ քարոզելու Հոռմի հրահանգով և հայերը կաթոլիկ դարձնելու աշխատած: Այս պարագային սպանիացին չէ որ կգործե, այլ կաթոլիկ քարոզիչը և մշակութային որևէ գործ չէ, որ կկատարե ծնունդով սպանիացի կրոնական քարոզիչը, որ ոչ մեկ օգուտ է որ կբերե հայուն: Հետևաբար մենք զանոնք կնկատենք ոչ թե գիտության և գրականության մշակույթներ, այլ պարզ պառակտողներ, որոնք ոչ մեկ մշակութային գեր չեն կատարած:

Իսկ հայերը մշակութային տեսակետով իրենց կարգին չէին կրնար սպանիացի ժողովուրդին մտավոր զարգացման որևէ նպաստ բերել, աշխարհագրական անջրպետը բավական մեծ և բարձրու և լեզվին տարբերությունները բավական շեշտված ըլլալուն համար:

Այնպես որ մշակութային տեսակետով սպանիացիք մեզմե չեն օգտված և մենք ալ փոխադարձաբար մինչև ներկա գարու սկիզբը մտավորական կապեր չենք ունեցած Սպանիո հետ:

Ասով հանդերձ 1624 հուլիս 19 թվակիր Սպանիո պապական նվիրակին ուղղված Փուլթե մը կհասկցվի, թե Հոռմ որոշած էր հայ տղոց համար Հնդկաստանի սպանիական կալված Գոայի (Կոա) մեջ բանալ վարժարան մը, որուն հոգը հանձնված էր P. Cittadino (Պողոս Չիտտատինո) Միրայի արքեպիսկոպոսին, որ ծանոթ էր հայերեն լեզվին և հայ ժողովրդյան, և կարգված նախիջևանի Մատթեոս Միրանշեցի եպիսկոպոսին «օգնական, յաջորդութեան իրավամբ»:

Այս եպիսկոպոսը կղրվեր Սպանիա, որպեսզի նվիրակին միջոցով ներկայանա թագավորին և անկե նպաստ մը ստանա «ղարոցին համար», վասնզի գումարը, որ Հոռմեն «երբեմն պիտի հայթայթվի, պիտի շկարենա բավական ըլլալ»¹:

Չիտտատինո, որ հանձնարարական մըն ալ ուներ՝ ուղղված նույն թվականով Սպանիո արքեպիսկոպոս Լուիզի տե Գամայի, Սպանիայեն գացած էր Հնդկաստան հանգանակության համար: Հոն մեծ գումար հանգանակելով, երբ կդառնար Իտալիա, մեռավ Սպանիո մեջ և հանգանակած գումարը թողուց Հոռմի մեջ հիմնվելիք հայ դպրոցին ըստ կալանոսի²:

Չիտտատինո մեռած է 1627-ին: Իր հանգանակած գումարն էր 2212 ունալ, գոր Հոռմ բերավ Joan 'Baptista Durali. Կերևա թե Չիտտատինո Կոայի մեջ դժվարության հանդիպած է³ և օգտակար չէ կրցած ըլլալ հայոց: Չափազանց

¹ Հ. Ն եր ս ե ս Ա կ ի ն յ ա ն, Մովսես Տաթևացի, էջ 394—395:

² Rap. Lettere Valgari an 1623—1624, vol. 3, էջ 131, «Ավետիք», 1945, էջ 102:

³ Մովսես Տաթևացի, էջ 396:

զարմանալի է սակայն, որ Փոլ Չիտտատինո, իր հայ լեզվին և հայ ժողովրդին ծանոթ ըլլալով Հնդկաստանի կոտա քաղաքին մեջ հայերու համար դպրոց մը բանալու գաղափարը հղացած է անըմբռնելի ծրագրով մը: Հայոց թիվը ոչինչ էր Հնդկաստանի մեջ և հատկապես անոնցմով զբաղելու համար չենք գիտեր, թե ինչ պատճառներ գոյություն ունեին:

Ամեն պարագայի մեջ այս անխորհուրդ ծրագիրը շատ քիչ արդյունավոր ըլլալու սահմանված էր, և թե իրագործվեր իսկ, սակայն ինչպես կերևի այդ բախտին ալ չէ արժանացած: Այս առաջին ձախող փորձեն ետք ուրիշ կերպով հայերը սպանացի միտքին հետ հարաբերության զրկված են միայն սպաներեն լեզվի թարգմանություններով:

Այսպես՝ կհիշվի երևանցի Աղազարի որդի պարոն Բարբիելը, որ հայտնի չէ ուր և ինչպես սորված է սպաներենը, որ իր առևտրական գործով Հնդկաստան գտնված ժամանակ թարգմանած է այդ լեզվեն երկու գիրք, որոնք տպագրված են Վենետիկ: Առաջինն էր Մարկոս Ավրիլիոս իմաստասեր կայսեր կենսագրությունը, որ կիրեր հիացական անուն մը՝:

Ինչպես գրքին ճակատը ցույց կուտա, սպաներենի գիտակ այս վաճառականը, որ շատ զորավոր չէր հայերեն լեզվին մեջ, գիրքին հիշատակարանին մեջ ներթողներու կարժանանա: Հիշատակարանին մեջ մեծ նշանակություն տրված է գրքին թարգմանության. «Քանզի ողորմածն Աստված, ըստ մեծի ողորմության իւրում, ոչ կամելով թէ ազգն Հայոց զուրկ մնայցէր յայսպիսույ մեծագոյն գանձէ, որպէս զթաժ եւ ողորմած ներշնչեաց ի նա զխորհուրդ բարի գի կամեցէր թարգմանել զայս»²:

Երկրորդ թարգմանությունը, ըստ էությունի, այնպիսի աստվածային նախախրնամությունն սահմանված մի ձեռնարկություն չէ հայտարարված, բայց ունի իր հատուկ նշանակությունը: Վաճառականական թափառիկ արկածայի կյանքի մեջ մեծ նշանակություն ուներ կտակը, որով վաճառականն իր ստացվածքներուն համար կարգադրություններ կրներ: Մատրաս քաղաքի ջուղայեցի վաճառականներն մեկը, Պետրոս Ոսկանյան, կուտա Բարբիելին սպաներեն լեզվով գրված աշխատություն մը, որ ցույց կուտա կտակներ խմբագրելու ձևերը և կխնդրէ թարգմանել հայերենի «ի յօգուտ ազգի մերոյ»:

Այս առաջարկը կկատարէ Գարբիել և կտպագրէ իր թարգմանությունը 1749 թվականին սա ճակատով գիրքով մը.

«Երբ որ կոչի վարժումն կտակագրության: Որով յորդորի ճանապարհորդ մարդն ի կենի այսմիկ, առ, ի առնել զկտակն իւր խոհեմապէս, և առ ի նախահոգալ զայն, զոր արագապէս լինելոց է»: «Թարգմանեցեալ ի սպանիական լե-

¹ «Երբ որ Ոսկեզն և թուղթը քաղցրայուրք: յօրս բնթեռնանին վարք, արարմունք եւ բարքն իմաստագունեց փիլիսոփայի, ճարտարագունեց բանաստեղծի: Մարկոսի Աւրիլիոսի կայսեր՝ Նորայեւ սրբագրեցեալ եւ ուղղեցեալ: Յավելուն՝ այսմիկ Նորայեւ ցանկը ամենից գորութեանց բանից, եւ բարեաց ստացուածոց որք ի սմա տարուենակին»:

² Թարգմանեցեալ ի սպանիականէ ի հայկական բարբառ ի նախանձյուց և ջանասէր Պարոն Գարբիել Համագասպեան Երևանցոյ ի յօգուտ եւ ի զուարճութիւն ազգիս Հայոց, Վենետիկ, 1738»:

³ Այս գիրքին վրա բովանդակ մանրամասն ծանոթություններ տված է և ամբողջ երկար հիշատակարանը հրատարակած է Դազիկյան իր Հայկական նոր մատենագրության մեջ, էջ 1009—1011:

զույգ ի Հայ բարրառու յերևանցի Աղազարի որդի Պարոն Գաբրիէլէ: Եւ տպագրեցեալ եղեւ արդեամբք նոյնոյ թարգմանչի, ի փառս Աստուծոյ եւ ի յոգուց բարեպաշտ անձանց, ի հայրապետութիւն Տեառն Ղազարու Հայոց կաթողիկոսի.....1749 յօգոստոս 20»: Լեռ, այս տեղեկութիւնները տալեն ետք, անմիջապէս դիտել կուտա թե պետք չէ զարմանք պատճառն այս անգրագիտութիւնը որ կտիրե թարգմանութիւններուն մեջ¹:

Ատիկա երևույթ մըն է հատուկ մանավանդ վաճառականական գրականութեան, երբ ան լույս աշխարհ կհանն առանց նախապէս սրբագրել տալու հմուտ գրագետի մը ձեռքով իր հեղինակութիւնը²:

Սպաներենն հայերենի վերածված գործերուն մեջ ամենեն հետաքրքրականը էր հայու մը՝ Չաքարիա Մարտիրոսյանի կամ Չաքարիա տի Մարտիրոսի սպաներենն թարգմանված մեկ գործը՝ աշխարհաբար լեզվով:

Գիրքը կկոչվի «Ճշմարիտ իմաստութիւն»:

Թարգմանված է 1755-ին, բայց տպագրութեան չէ արժանացած, թարգմանիչը Ֆրանչիսկոս Չաքարիա Մարտիրոսյան, հայ մատենագիրներու մեջ առաջինն է, որ կրմրոստանա գրաբար լեզվի գործածութեան դեմ և իր գիրքը կգրե աշխարհաբար լեզվով, պարզելով այս մասին իր տեսակետները, և աշխարհաբարով իր գիրքը գրելու նախապատվութիւն տալուն պատճառները կբացատրե³:

Ան ինչպէս կերևի շատ լավ ըմբռնած էր, թե անկարելի է վերակենդանացնել գրաբարը և նախընտրած է խոսված լեզուն գործածել իր գործին մեջ և ասոր համար կգործածե նոր Ջուղայի հայ գավառաբարբառը, որ այն ատեն տարածված էր բոլոր Պարսկաստանի և Հնդկաստանի մեջ:

«Չաքարիա տի Մարտիրոս Ըսպահանեցիս», ինչպէս ինքն կստորագրե, կրոնավոր էր և անդամ Ֆրանչիսկյան միաբանութեան, բայց հայ: 1755 թվականին ան գացած է Ֆիլիպյան կղզիներու Մանիլա քաղաքը, ուր նա եղած է նույն միաբանութեան վանքին «Մարամպետ»: Այս կրոնավորը ուներ «Ճշմարիտ իմաստութիւն» գրքի թարգմանութեանն զատ նաև ուրիշ երեք գիրքեր նույնպէս աշխարհաբար:

Չաքարիա Մարտիրոսյանի դժվարութիւններով կատարած շորս հավանորեն թարգմանութիւններուն մասին դժբախտաբար միայն այսքան տեղեկութիւններ կան: Այս գործերը տպագրութեան չեն արժանացած և թերևս մինչև այսօր անհայտ պիտի մնային, եթե անոնցմէ մեկը՝ «Ճշմարիտ իմաստութիւնին» ձեռագիրը 1848-ին նոր ջուղայեցի Սարգիս Մանուկյան Ռանգունեն կալկաթա՝ Մեսրոպ Թաղիադյանցի ուղարկած չլլար և ան «Ազգասեր Արարատյան» հանդեսին մեջ (1848, թիվ 11) հրատարակած չլլար անոր հառաջաբանը:

Այս շորս գիրքերը, եթե նույնիսկ ըստ Չաքարիա Մարտիրոսյան վարդապետին փափաքին համաձայն մեկենասներու շնորհիվ արժանացած ըլլային

¹ Տե՛ս Լ. Ե. Ն. Հայոց Պատմութիւն, Գ հատոր, էջ 1024:

² Այս գիրքին առաջաբանը հետաքրքիրներ կրնան գտնել Ղազիկյանի «Հայկական նոր մատենագրութեան» մեջ (տե՛ս էջ 1389):

³ Հետաքրքիրներ կրնան անոնց ծանոթանալ կարդալով «Հանդես ամսօրյայի» (1934, էջ 389—397) Ֆրանչիսկոս Չաքարիա Մարտիրոսյանի տեսութիւնները, որ իր ժամանակին համար ոչ միայն նորութիւններ են, այլ նաև կուտան ապացույցներ անոնց հեղինակին հառաջադիմական ոգովուն: Ուղիղ տրամաբանութեան և լուրջ դատողութեան:

տպագրութեան, շեմ կարծեր թե մեծ ազդեցութիւն մը թողած ըլլալին հայ ազգին և գրականութեան վրա և նոր ճամբա մը բացած: Հետևաբար մշակութեան տեսակետով գրեթե բնաւ կամ շատ քիչ ազդեցութիւն ունեցած է Ալպանիա հայոց վրա:

ИСПАНИЯ И АРМЕНИЯ

АРШАК АЛПОЯДЖЯН (Каир)

(Резюме)

Автор показывает, что в период крестовых походов между испанцами и Киликийским армянским государством устанавливаются торговые и политические отношения, которые, конечно, имели также религиозную подоплеку. В 1293 г. был заключен союз между киликийским армянским королем Хетумом II и арагонским королем.

Испанские короли — арагонский король Педро IV (1336—1387) и кастильский король Хуан I (1379—1390) — энергично помогали освобождению киликийского армянского короля Левона VI Лусиняна, находившегося в плену у египетского султана. После его освобождения король Хуан I в 1383 г. подарил ему города Мадрид, Виллареал и Андухар на правах пожизненного условного держания. Испанские княжества, в особенности арагонские и кастильские, поощряли и всячески поддерживали намерение Левона VI восстановить в Киликии армянскую королевскую власть.

Испанцы — служители католической церкви — действовали в Армении в качестве членов, главным образом, Доминиканского ордена.

В свою очередь, начиная с XIII вплоть до XVIII вв., с Испанией поддерживали связь церковные деятели возникших в Армении католических общин, равно и отдельные деятели армянской церкви, склонные к унии с католицизмом. Эти сношения, преследовавшие цель распространения католицизма среди армян, не были лишены также и политического смысла.

Посещавшие Испанию деятели армянских католических общин подчас сообщали небезынтересные сведения об этой стране и о других странах Западной Европы.